ՄԱՄՈՒԼԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԿԶՆԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ. Կ.

1920 թ. դեկտեմբերի 2-ին, Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո, բնակչության լայն զանգվածների շրջանում գաղափարաքաղաքական ու մշակութային քարոզչություն իրականացնելու և կոմունիստական գաղափարներ արմատավորելու նպատակով, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) ղեկավարությունը ձեռնամուխ եղավ հանրապետությունում մշակույթի քաղաքական վերահսկողության իրականացմանը: Դրան էին միտված կրթամշակութային հաստատությունների (թատրոն, կինո, թանգարան, գրադարան, գրախանութ և այլն), տպարանների, մինչև իսկ երաժշտական գործիքների պետականացումը, հրատարակչական գործի կենտրոնացումը, այնուհետև քաղաքական լուսավորության կենտրոնացված համակարգի ստեղծմանն ուղղված քայլերը: Այս գործողություններին, բնականաբար, հաջորդեց գրաքննական համակարգի հաստատումը: Ըստ այդմ էլ՝ Խորհրդային Հայաստանում պետության կողմից մամուլի նկատմամբ իրականացվող վերահսկողական քաղաքականության ուսումնասիրության առաջնային հարցերից է մամուլի գրաքննությունը (այդ թվում՝ մամուլի ռազմական գրաքննությունը), որ մինչ այժմ առանձին հետազոտության թեմա չի եղել:

Փաստենք, որ, ի տարբերություն Հայաստանի Առաջին հանրապետության, Խորհրդային Հայաստանում սկսեցին հրատարակվել միայն կոմունիստական ուղղվածության թերթեր և ամսագրեր: Դադարեցվեց ոչ միայն նախկին իշխող կուսակցության՝ ՀՅ Դաշնակցության, այլև մյուս կուսակցությունների պարբերականների տպագրությունը: Հայաստանի խորհրդայնացման շրջանում հանրապետությունում հրատարակվում էին՝ ՀՅԴ Բյուրոյի, փաստացի նաև ՀՀ կառավարության «Յառաջ», Հայ ժողովրդական կուսակցության «Ժողովուրդ», Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի խորհրդի «Հայաստանի ձայն» պաշտոնաթերթերը, Ռազմական նախարարության «Ռազմիկ» շաբաթաթերթը, Հայաստանի կոոպերատիվների կենտրոնական միության (Հայկոոպ) «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթը[1]:

Հայաստանի խորհրդայնացման օրերին ՀՅ Դաշնակցությունից անջատված Ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների խմբակը (Հայկ Ավալյան և

---

[1] *Տե՛ս* **Հակոբյան Ա.**, *Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Ե., 2005:*

ուրիշներ) սեփական պաշտոնաթերթ հրատարակելու փորձ կատարեց, ինչը ՀՍԽՀ իշխանությունները չթույլատրեցին[2]: Մեզ այլ վկայություն հայտնի չէ, որ ոչ խորհրդային որևէ խմբավորում դիմած լինի Հայաստանի հեղափոխական կոմիտեին՝ թերթ հրատարակելու խնդրանքով և մերժում ստացած լինի: Սա պայմանավորված էր այն իրողությամբ, որ խորհրդայնացմանը հաջորդող օրերին ՀՅ Դաշնակցությունն ու մյուս կուսակցությունները փաստացի դադարեցրել էին իրենց գործունեությունը՝ առժամանակ ընդհատակ անցնելով: Ակնհայտ է, որ ցանկացած նման դիմում Չեկայի ուշադրությունը սևեռելու էր նախաձեռնողների վրա և լավագույն դեպքում անուշադրության էր մատնվելու: Չմոռանանք նաև, որ հանրապետության բոլոր տպարանները բռնագրավված և պետականացված էին: Հետաքրքրական է, որ Սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստների՝ Թիֆլիսում հրատարակվող «Նոր խոսք» շաբաթաթերթի խմբագրակազմը Հայաստանի խորհրդ-դայնացումից հետո որոշեց պարբերականի տպագրությունը շարունակել Խորհրդային Հայաստանում: Նման հաղորդագրություն կա բոլշևիկամետ այդ թերթի վերջին համարում[3]: Այդուհանդերձ, այս որոշումը կյանքի չի կոչվել: Չիրականացավ նաև 1921 թ. ամռանը օրաթերթ և գրական-գեղարվեստական շաբաթաթերթ տպագրելու՝ հայ սոցիալիստ-հեղափոխականների ձախ թևի ծրագիրը: Այն դեպքում, երբ վերջինս իրեն խորհրդային կարգերի «անվերապահ կողմնակից» էր հայտարարել[4]: ՀՅԴ-ի «Ուրարտիա» տպարանում, որտեղ նախկինում հրատարակվում էր «Յառաջը», 1920 թ. դեկտեմբերի 5-ից սկսեց տպագրվել Հայաստանի կոմկուսի կենտկոմի պաշտոնաթերթ, հայալեզու «Կոմունիստը»[5]: Այն ՀՍԽՀ մամուլի առաջնեկն էր (1921 թ. մայիսին վերանվանվեց «Խորհրդային Հայաստան»), որին այնուհետև հաջորդեցին նորանոր պարբերականներ: Դրանք տպագրվում էին ինչպես մայրաքաղաք Երևանում, այնպես էլ գավառներում:

1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառով Խորհրդա-յին Հայաստանում առժամանակ ընդհատվեցին մամուլի նկատմամբ պետական-կուսակցական վերահսկողությանն ուղղված գործողությունները: Հարկ է փաստել, որ ապստամբության պարտությունից և ապրիլի 2-ին մայրաքաղաք Երևանը վերագրավելուց հետո ևս ՀՍԽՀ իշխանությունները կարծես չէին շտապում մամուլի նկատմամբ գրաքննություն սահմանելու հարցում: Նշենք, որ

---

[2] *ՀՅ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող և պատասխանատու խմբագիր՝ Ղազախեցյան Վ. Ն., Ե., 1999, էջ 68:*

[3] *Նոր խոսք, Թիֆլիս, 13.XII.1920:*

[4] *ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի բյուլետեն, Ե., 1921, N 1 (հունիս), էջ 4:*

[5] ***Վրացեան Ս.**, Յուշեր մօտիկ անցեալից. Բոլշեւիկեան դրախտը (Հայրենիք, Բոստոն, 1923, N 2, էջ 68):*

1918 թ. վերջերից Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետությունում (ՌՍԴԽՀ) մամուլի նախնական ռազմական գրաքննություն էր իրականացնում Հեղափոխական ռազմական խորհրդի կազմում ստեղծված Ռազմագրաքննական բաժինը՝ պետական և ռազմական գաղտնիքի պահպանման նպատակով: 1918 թ. դեկտեմբերի 23-ին հաստատված կանոնադրության համաձայն, վերջինի հիմնական պարտականությունը ռազմական գաղտնիքի պահպանումն ու ՌՍԴԽՀ-ի շահերի պաշտպանությունն էր[6]: Բնականաբար, նշյալ սկզբունքներով առաջնորդվեցին նաև խորհրդային մյուս հանրապետությունները:

Ի դեպ, 1920 թ. նոյեմբերի երկրորդ կեսից Խորհրդային Ադրբեջանում ևս սկսեց իրականացվել մամուլի նկատմամբ կազմակերպված նախնական ռազմական գրաքննություն[7]: Անշուշտ, բացառություն չկազմեց նաև հայալեզու մամուլը: ԱԿ(բ)Կ կենտրոնական և Բաքվի կոմիտեների պաշտոնաթերթ «Կոմունիստը», 1920 թ. նոյեմբերի 19-ի համարից սկսած, ռազմական գրաքննություն էր անցնում (թերթի վերջին՝ չորրորդ, էջում առկա է "Р.В.Ц.", այն է՝ "Разрешено военной цензурой" նշագրումը)[8]: Վրաստանի խորհրդայնա-ցումից (25.II.1921) հետո այստեղ ևս անմիջապես մամուլի նկատմամբ կազմակերպված նախնական ռազմական գրաքննություն իրականացվեց, այդ թվում՝ հայկական մամուլի նկատմամբ: Այսպես՝ Վրաստանի հեղկոմի պաշտոնաթերթ, հայալեզու «Կարմիր աստղի» 1921 թ. մարտի 10-ի համարից սկսած՝ թերթի վերջին էջում առկա է "Р.В.Ц., Тифлис" նշագրումը[9]: 1921 թ. մարտի 13-ից Թիֆլիսում հրատարակվող՝ «արևմտահայ կոմունիստների օրգան», հայալեզու «Կարմիր օրեր» թերթն առաջին իսկ համարից ռազմական գրաքննություն էր անցնում[10]: Փաստորեն, Անդրկովկասում վերջինը ՀՍԽՀ-ում է սկսել իրականացվել մամուլի նախնական ռազմական գրաքննություն: Կարծում ենք՝ այս հանգամանքը կարող էր պայմանավորված լինել այն իրողությամբ, որ Բաքվում ու Թիֆլիսում նկատելի թիվ էին կազմում ռուսերեն և տեղական լեզուներով հրատարակվող պարբերականները, ուստի նոր իշխանությունների համար չափազանց վտանգավոր էր դրանք «ինքնահոսի մատնելը»: Իսկ Խորհրդային Հայաստանում հրատարակվում էին մի քանի թերթեր: Բացի այդ՝ ՀՍԽՀ այդ շրջանի

---

[6] *История советской политической цензуры. Документы и коммен-тарии, М., 1997, с. 31-32,* **Давидян И.** *Военная цензура в России в годы гражданской войны, 1918-1920 гг. (Cahiers du monde russe: Russie, Empire russe, Union soviétique, états indépendants, vol. 38, N 1-2, janvier-juin 1997, c. 119).*

[7] *Коммунист, Баку, 15.XI – 2.XII.1920.*

[8] *Կոմունիստ, Բաքու, 19.XI.1920:*

[9] *Կարմիր աստղ, Թիֆլիս, 10.III.1921:*

[10] *Կարմիր օրեր, Թիֆլիս, 13.III.1921:*

ղեկավարները, մասնավորապես Հայկոմկուսի կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան), չեզոք դիրքորոշում ունեին գրաքննության հարցում:

Արխիվային փաստաթղթերի և պարբերական մամուլի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ ՀՍԽՀ-ում ևս սկզբում միայն մամուլի նախնական ռազմական գրաքննություն էր իրականացվում: Անվիճելի փաստերը հնարավորություն են տալիս առնվազն 1921 թ. հուլիսից խոսել Խորհրդային Հայաստանում նախնական ռազմական գրաքննության առկայության մասին: Այսպես՝ 1921 թ. հուլիսի 15-ին տպագրված երրորդ համարից սկսած (թերթի առաջին համարը հրատարակվել է հուլիսի 7-ին)՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի կողմից Երևանում հրատարակվող «Կարմիր գութան» գյուղացիական թերթի վերջին (երկրորդ) էջում առկա է «Երևան, Թ.Զ.Գ.», այն է՝ «թույլատրել է զինվորական գրաքննությունը» նշագրումը[11]: Սա Խորհրդային Հայաստանում նախնական ռազմական գրաքննության մասին մեզ հայտնի առաջին վկայությունն է:

Տրամաբանական է կարծել, որ սկզբում ՀՍԽՀ-ում պետք է նախնական ռազմական գրաքննության ենթարկվեր հանրապետությունում հրատարակվող միակ զինվորական պարբերականը՝ ՀՍԽՀ Կարմիր բանակի քաղաքական բաժնի պաշտոնաթերթ «Կարմիր զինվորը»: Սրա անդրանիկ համարը հրատարակվել է 1921 թ. հունիսի 6-ին՝ փաստացի դառնալով 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. փետրվարը հրատարակված «Կարմիր բանակ» թերթի իրավահաջորդը, թեև նախորդի համարակալումը չէր շարունակում: Ցավոք, Հայաստանի ազգային արխիվում և Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թերթի 1921 թ. հավաքածուները պակասավոր են. չեն պահպանվել հունիսի 19-ից օգոստոսի 10-ի միջակայքում տպագրված 6-13 համարները, որի պատճառով չենք կարող պարզել, թե երբվանից է այն նախնական ռազմական գրաքննության ենթարկվել: Նշենք, որ «Կարմիր զինվորի»՝ 1921 թ. օգոստոսի 10-ի և հաջորդ համարներում առկա է «Թ.Զ.Գ., Երևան» նշագրումը[12]:

Ռազմական գրաքննությունը չշրջանցեց նաև գավառներում հրատարակվող պարբերականները: Էջմիածնի գավկոմի և գավհեղկոմի պաշտոնաթերթ «Կարմիր գյուղացին», որը հրատարակվում էր 1921 թ. ապրիլի 24-ից, սեպտեմբերի 1-ի համարից սկսած՝ նախնական ռազմական գրաքննություն էր անցնում[13]: Ավելի քան մեկամսյա ընդհատումից հետո՝ 1921 թ. սեպտեմբերի 25-ին տպագրված ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեի և հեղկոմի պաշտոնաթերթ «Կարմիր Շիրակը» ևս զինվորական գրաքննություն էր անցնում[14]:

---

[11] *Կարմիր գութան, 15.VII.1921:*
[12] *Կարմիր զինվոր, 10.VIII.1921:*
[13] *Կարմիր գյուղացի, 1.IX.1921:*
[14] *Կարմիր Շիրակ, 25.IX.1921:*

Այդուհանդերձ, ՀՍԽՀ-ում 1921 թ. երկրորդ կեսին ռազմական գրաքննությունը կազմակերպված բնույթ չէր կրում, և ոչ բոլոր գավառներում կային ռազմական գրաքննիչներ: Օրինակ՝ Զալալօղլիում հրատարակվող ՀԿ(բ)Կ Լոռու գավառային և հեղափոխական կոմիտեների «Կարմիր Լոռի» պաշտոնաթերթի 1921 թ. համարներում թույլտվության մասին նշագրում չկա[15]: Գորիսում տպագրվող Զանգեզուրի հեղկոմի և ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի պաշտոնաթերթ «Խորհրդային Զանգեզուրի» պահպանված միակ համարը, որը հրատարակվել է 1921 թ. հուլիսի 28-ին, նախնական գրաքննություն անցած լինելու մասին նույնպես նշագրում չունի[16]:

Առկա փաստերից դատելով՝ Խորհրդային Հայաստանում ռազմական գրաքննության գործառույթը, ՌՄԴԽՀ-ի օրինակով, սկզբում վերապահված էր Ռազմական գործերի ժողկոմատին (1921 թ. մայիսից ռազմժողկոմը Ալեքսանդր Մյասնիկյանն էր): Չմոռանանք, որ ՀՀ զինվորական նախարարությունը ևս ռազմական գրաքննիչ ուներ[17]: Ասվածը հաստատող մեկ փաստ ներկայացնենք: Մեր ձեռքին է ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ս. Լուկաշինի անթվակիր գրությունը ՀՍԽՀ ռազմժողկոմ Ա. Մյասնիկյանին, որտեղ նշվում է, որ ՀԿ(բ)Կ կենտկոմի, Երևանի կոմիտեի և ՀՍԽՀ ժողկոմխորհի պաշտոնաթերթ "Наша Правда"-ի հրատարակությունը ձգձգվում է ռազմական գրաքննության կողմից: Այնուհետև ընդգծվում է, որ կուսկենտկոմն առավել նպատակահարմար է համարում ռազմական գրաքննիչ նշանակել ոմն Ռեզցովի: Այլապես, առաջարկվում էր տեխնիկապես պարզեցնել պարբերականի գրաքննության ընթացքը կամ էլ այն ազատել գրաքննությունից[18]:

Այն հանգամանքը, որ ռազմական գրաքննության հարցով կենտկոմի քարտուղարը դիմում էր ռազմժողկոմին, վկայում է, որ վերջինի լիազորությունների շրջանակում էր մամուլի ռազմական գրաքննությունը: Գրությունում "Наша Правда" թերթի հիշատակումը մեզ օգնում է փաստաթղթի մոտավոր թվագրման հարցում: Թերթի առաջին համարում (7.XI.1921) ռազմական գրաքննության մասին նշագրում չկա: Իսկ արդեն երկրորդ համարից սկսած՝ թերթի վերջին էջում առկա է "Д.В.Ц. ("Дозволено военной цензурой) նշագրումը[19]: Մենք առավելապես հակված ենք կարծելու, որ փաստա-թղթում հիշատակվածը վերաբերում է "Наша Правда"-ի առաջին համարի տպագրության

---

[15] *Կարմիր Լոռի, 18.V–29.XII.1921:*

[16] *Խորհրդային Զանգեզուր, 28.VII.1921:*

[17] **Սուքիասյան Հ. Կ.,** *Մամուլի պետական վերահսկողությունը և գրաքննությունը Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.) (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2015, N 3, էջ 65-68):*

[18] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 1, գ. 99, թ. 17:*

[19] *Наша правда, 7, 10.XI.1921.*

խնդրին: Առավել քիչ հավանական է, որ այն վերաբերեր թերթի երկրորդ համարին, քանի որ պարբերականը հրատարակվում էր շաբաթը երեք անգամ: Այս դեպքում նրա առաջին երեք համարները հրատարակվել են մեկ շաբաթվա ընթացքում՝ նոյեմբերի 7-ին (երկուշաբթի), 10-ին (հինգշաբթի) և 12-ին (շաբաթ): Այլապես գրությունում կնշվեր թերթի կոնկրետ համարի մասին (ինչպես այլ դեպքերում է լինում):

Յուցադրական միջոցառումների ընթացքում ռազմական գրաքննության շահերը հաշվի առնելու նպատակով Ռազմժողկոմատը համագործակցում էր Լուսժողկոմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության (քաղլուսգլխվար) հետ: Այսպես, հիմք ընդունելով 1922 թ. մայիսի 31-ին Ռազմժողկոմատի կողմից Գ. Աղաջանյանին տրված մանդատը՝ հունիսի 1-ին Քաղլուս գլխվարչությունը նրան թույլատրեց հետադարձ հսկողության նպատակով անվճար հաճախել որևէ ներկայացման, համերգի, հանրային դասախոսության, կինոդիտման, կրկեսային և այլ տեսարանային միջոցառումների[20]:

1922 թ. մարտին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների միավորմամբ ստեղծվեց Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Դաշնային Միությունը (ԱՍԽՀԴՄ): Այն նախատեսում էր հանրապետությունների՝ պետականությունն արտահայտող որոշ կառավարման մարմինների (արտաքին գործերի, արտաքին առևտրի, ֆինանսների, աշխատանքի, բանգյուղտեսչության ժողկոմատների) լուծարում: Էականորեն սահմանափակվեցին ՀՍԽՀ ռազմժողկոմատի գործունեության շրջանակները[21]: Այս պայմաններում ռազմական գրաքննության գործառույթը ռազմժողկոմատից անցավ Հայաստանի արտակարգ հանձնաժողովին:

Խորհրդային ամբողջատիրական պետական կառավարման համակարգի ձևավորման գործընթացում առանցքային դերակատարություն էր վարապահված Արտակարգ հանձնաժողովին (Չեկա): 1921 թ. օգոստոսի 1-ից ՌՍԴԽՀ-ում մամուլի նախնական ռազմական գրաքննությունը փոխանցվեց Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի իրավասությանը[22]: Ինչպես երևում է, ՌՍԴԽՀ-ի օրինակով, Հայաստանի արտակարգ հանձնաժողովը (Հայչեկա) ևս

---

[20] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 140, թ. 13:*

[21] *ՀՍԽՀ կենտգործկոմի՝ 1922 թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ, հանրապետության ռազմժողկոմ նշանակվեց անվանի զինվորական Հայկ Բժշկյանցը (Գայ): ԽՍՀՄ կազմավորման գործընթացի պայմաններում Անդրդաշնության միութենական խորհրդի՝ 1922 թ. նոյեմբերի 22-ի որոշմամբ և դաշնության ռազմածովային գործերի ժողկոմատի՝ նոյեմբերի 23-ի հրամանի հիման վրա ՀՍԽՀ ռազմժողկոմատը վերանվանվեց զինվորական կոմիսարիատ (Բանբեր Հայաստանի արխիվների, 1971, N 2, էջ 214-215, 230):*

[22] *История советской политической цензуры. Документы и комментарии, с. 33.*

քայլեր ձեռնարկեց ռազմական գրաքննություն իրականացնող կառույց ստեղծելու ուղղությամբ: Դեռևս 1921 թ. հոկտեմբերի 1-ին ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեին ուղղված «հույժ գաղտնի» գրությամբ ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովը, պատճառաբանելով աշխատակիցների թվի պակասը, խնդրում էր իր տրամադրության տակ ուղարկել երկու-երեք «վստահելի ընկերոջ»՝ ռազմական գրաքննության բաժնում աշխատելու համար[23]: Սակայն Հայչեկայի նշյալ մտադրությունն առժամանակ կյանքի չկոչվեց:

Միայն 1922 թ. հունիսի 22-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղարությունը որոշեց ռազմական գրաքննության լիազորությունը փոխանցել ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովին՝ առաջարկելով գրաքննական բաժանմունքի պետ նշանակել գրականությանը ծանոթ մարդու[24]: Մինչ այդ Հայչեկան փաստացի գրաքննական գործառույթներ էր իրականացնում: Այսպես՝ դեռևս 1922 թ. ապրիլի 28-ին Պետական թատրոնի, կինոթատրոնների վարիչներին, Ժողտնտխորհի ծառայողների կոլեկտիվին, Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի (ՀԱՄԽ) մշակույթի բաժնին ուղղված հրահանգում ՀՍԽՀ լուսժողկոմատի քաղլուսգլխվարչությունը տեղեկացրեց, որ ցանկացած պիեսի, հատվածի, քառատողի, հանկարծաստեղծման (իմպրովիզացիա), ռոմանսի, կինոֆիլմի և այլնի ներկայացումից կամ ցուցադրությունից առաջ պետք է նախապես ստանան Հայչեկայի ռազմաքաղաքական գրաքննության բաժնի թույլտվությունը՝ համապատասխան մակագրությամբ: Կարգադրու-թյունը չկատարողներին սպառնում էր չեկայի կողմից «խիստ պատասխանատվության ենթարկվելու» հեռանկարը[25]:

Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի ավարտից հետո խորհրդային իշխանությունները Վ. Լենինի գլխավորությամբ որոշեցին սահմանափակել Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի գործա-ռույթները: Դա ամրագրվեց ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրոյի 1921 թ. դեկտեմբերի 1-ի և ՌՍԴԽՀ խորհուրդների 9-րդ համագումարի (23-28.XII.1921) որոշումներում: 1922 թ. փետրվարի 6-ին Համառուսաստանյան կենտգործկոմը դեկրետ ընդունեց Արտակարգ հանձնաժողովը և դրա տեղական մարմինները լուծարելու մասին: Դրա փոխարեն Ներքին գործերի ժողկոմատի կազմում կազմակերպվեց նոր մարմին՝ Պետական քաղաքական վարչություն, որի հիմնական գործառույթը հայտարարվեց խորհրդային երկրի պետական անվտանգության պահպա-

[23] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 142, թ. 102:
[24] Նույն տեղում, ց. 2, գ. 7, թ. 32 շրջ.:
[25] Նույն տեղում, գ. 125, թ. 102:

նությունը[26]: Դա տեղի ունեցավ նաև խորհրդային մյուս հանրապետություններում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում:

Այսպիսով, առկա փաստերի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ 1920-ականների սկզբին պարտադիր չէր, որ տպագրության հենց առաջին համարից պարբերականները ռազմական գրաքննություն անցնեին: Երբեմն գրաքննության են ենթարկվել երկրորդ-երրորդ համարից: Օրինակ՝ 1922 թ. նոյեմբերի 7-ից արևմտահայ գաղթականների համար Երևանում հրատարակվող «Նոր Արևելք» թերթի առաջին և երկրորդ համարներում զինվորական գրաքննիչի թույլտվության մասին նշում չկա, սակայն, արդեն երրորդ համարից սկսած, թերթի վերջին էջում առկա է «Թ.Զ.Գ.Ք.» նշագրումը[27]: 1922 թվականից նախնական ռազմական գրաքննություն էին անցնում նաև ամսագրերը (այդ թվում՝ ուժային մարմինների կողմից հրատարակվողները)[28]: Ավելին, 1923 թ. մարտի 2-ի համարից սկսած՝ «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի վերջին էջում նս առկա է «Թ. Զ. Գ.» նշագրումը[29]:

Հայաստանի ազգային արխիվում մեր պրպտումները դեռևս դրական արդյունք չեն տվել. մեզ չի հաջողվել պարզել 1921-1923 թթ. (մինչև Հայգլավլիտի ստեղծումը) ՀՍԽՀ-ում ռազմական գրաքննություն իրականացնող անձի (անձանց) ինքնությունը: Ավելացնենք, որ ՀՍԽՀ ռազմական գործերի ժողկոմատի փաստաթղթերը հետագայում տեղափոխվել են և պահվում են Մոսկվայում:

Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի 1922 թ. հունիսի 6-ի դեկրետով ՌՍԴԽՀ Գլավլիտի հիմնումից հետո միութենական հանրապետություններում նս քայլեր կատարվեցին գրաքննական աշխատանքը կենտրոնացնելու ուղղությամբ: Ըստ այդմ էլ՝ ՀՍԽՀ-ում ցուցադրական միջոցառումների (թատրոն, կինո, երաժշտություն և այլն) գրաքննությունը 1922 թ. հուլիսին վերապահվեց Լուսժողկոմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչությանը: Խորհրդային Հայաստանում գրաքննական համակարգի ձևավորման գործում առանցքային դերակատարություն ունեցավ Դանիել Դզնունին, որը 1922 թ. հուլիսի 20-ից գրաղեցնում էր քաղլուսգլխվարի պաշտոնը: Արդեն 1922 թ. աշնանը վարչությանը վերապահվեց նաև տպագրական գրաքննությունը:

ՀՍԽՀ ժողկոմխորհի 1923 թ. հունիսի 21-ի որոշմամբ, «տպագիր երկերի գրաքննության և ռեպերտուարի վերահսկողության բոլոր ձևերը միացնելու

---

[26] **Սաֆինով Պ. Գ.**, *Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի պատմության ուրվագծեր (1917-1922 թթ.), Ե., 1961, էջ 333-334:*

[27] *Նոր Արևելք, Ե., 4.XII.1922:*

[28] *Հայկօօպի տեղեկատու, Ե., 1.I.1922, N 1, էջ 16, Գյուղատնտեսական կյանք, Ե., 15.XI.1922, N 1, էջ 26, Բյուլետեն Ներքին գործոց ժողովրդական կոմիսարիա-տի, Ե., 5.XII.1922, N 13-14, էջ 23, Մուրճ, Ե., 1922, N 2 (դեկտեմբեր), էջ 56, Նորք, գիրք 1, Ե., 1922, էջ 308 և այլն:*

[29] *Խորհրդային Հայաստան, Ե., 2.III.1923:*

նպատակով», լուսժողկոմատի քաղլուսգլխվարչության կազմում հիմնվեց Գրականության, հրատարակչության և խաղացանկի վերահսկողության վարչություն (Հայգլավլիտ), որի կանոնադրությունը ռուսական Գլավլիտի կանոնադրության տեղայնացված տարբերակն էր: Հայգլավլիտի և նրա տեղական (գավառային) մարմինների պարտականություններից էր ռազմական կամ պետական գաղտնիք բացահայտող տպագիր աշխատանքների, գեղարվեստական գործերի, կինոժապավենների հրատարակությունը, հրապարակային ներկայացումը կամ ցուցադրությունը կանխելը: Գրաքննությունից ազատված կուսակցական և պետական բարձրագույն իշխանության մարմինների, պետհրատի, գավքաղլուսվարի, գիտական հետազոտությունների հրատարակությունների պարագայում Հայգլավլիտի խնդիրն էր «միջոցներ ձեռք առնել զինվորական գրաքննության շահերն ըստ ամենայնի ապահովելու համար»[30]:

Հայգլավլիտի կազմակերպումից հետո ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովից նրան անցավ ռազմական գրաքննության գործառույթը: Շեշտենք, որ Հայաստանի արտակարգ հանձնաժողովը և նրան փոխարինած պետքաղվարչությունը հետագայում ևս կարևոր դերակատարություն ունեցան գրաքննական հսկողության ասպա-րեզում: Իր գործունեության ընթացքում Հայգլավլիտը համագործակցում էր իր կենտրոնական և տեղական մարմինների, նաև Միլիցիայի գլխավոր վարչության հետ, մասնավորապես անցանկալի գրականության «զտման», ներկայացումների արգելքի և այլ հարցերում:

Փաստորեն, մինչև 1923 թ. հունիսը Հայգլավլիտի կազմակերպումը Խորհրդային Հայաստանում մամուլի նկատմամբ իրականացվող հսկողությունը մի քանի փուլ է անցել: Հանրապետության խորհրդայնացմանը հաջորդող առաջին ամիսներին սոսկ պետական-կուսակցական վերահսկողություն, իսկ 1921 թ. ամռանից ռազմական գրաքննություն էր իրականացվում, սկզբում՝ Ռազմական գործերի ժողկոմատի, ապա՝ Արտակարգ հանձնաժողովի կողմից:

[30] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 132, թ. 13 շրջ., ֆ. 122, ց. 1, գ. 121, թ. 133 և շրջ.:

ФОРМИРОВАНИЕ ВОЕННОЙ ЦЕНЗУРЫ ПЕРИОДИКИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

СУКИАСЯН А. К.

Резюме

Изучение архивных документов и материалов периодики явствует о том, что после советизации Армении республиканская периодика находилась под строгим контролем государственно-партийных органов. Но уже с июля 1921 г. в отношении армянской периодики была задействована предварительная военная цензура, осуществляемая Наркоматом военных дел и Чрезвычайной комиссией. На последних страницах периодических изданий в обязательном порядке указывалось разрешение цензора. В июне 1923 г. был создан Армглавлит, которому были переданы полномочия военной цензуры.

THE FORMATION OF THE MILITARY CENSORSHIP OF THE PRESS IN THE SOVIET ARMENIA

H. SUKIASYAN

Abstract

One of the primary questions concerning the policy of control over the press in the Soviet Armenia is the study on the censorship of the press. This issue, including the military censorship of the press, has not so far been a subject of a special investigation.

From the comprehensive study on the archival documents and press it becomes evident that within the first months after the sovietization of Armenia only a state-party control over the press was carried out. From the July 1921 (the last in the Soviet Transcaucasia) in Armenia also a provisional military censorship of the press was implemented, at first by the People‘s Commissariat of Military Affairs, then by the Extraordinary Commission. In the last page of the periodicals there was a compulsory note about the authorization by the military censorship. In June 1923 after the formation of the Control Department of Literature (Armglavlit) the function of the military censorship passed under the competence of the last.